ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«ԱՐԱՔՍ» պատկերազարդ հանդէս վեցամսեայ. 1890 *թ. երրորդ տարի, Գիրք Ա, յունիս (եր. ժբ*+180+*գ*+84+15)*. Ս. Պետերբուրգ տպար. Սկորոխոդովի։ Բաժանորդագինն է* 3 *րուբլի, իւրաքանչիւր գիրքը* 2 *ր.* 50 *կոպէկ։*

«Արաքս»-ի այս տարուայ առաջին գրքոյկը միջոց է տալիս բաւականին որոշ հասկացողութիւն կազմել այդ պատկերազարդ հանդիսի բնաւորութեան և ուղղութեան մասին։

Մի որ և է հրատարակութեան ուղղութեան մասին պարզ հասկացողութիւն են տալիս գլխաւորապէս նորա հրապարակախօսական յօդուածները զանազան հասարակական խնդիրների վերաբերեալ։ «Արաքս»-ի այս համարում «Հասարակական խնդիրներ» բաժնին պատկանում է առաջնորդող յօդուածն՝ «Ազգային-Եկեղեցական խորհրդածութիւններ»։

Այդ յօդուածում մի ազգափըրկարար առաջարկութիւն է անւում։ Ուղարկելով հետաքրքրող ընթերցողին կարդալու այդ յօդուածը ամբողջապէս, որպէս զի նա հասկացողութիւն կազմի թէ ինչ է նշանակում մտքերի քաօսական գրութիւն և հայ-տիրացուական ոճ, լօգիկա ու աչխարհայեցողութիւն, մենք միայն յայտնենք յօդուածի միտքը. «քաղաքականապէս ոչ զարգացեալ ժողովուրդների մէջ ի հարկէ (ասում է «Արաքս»-ի հրապարակախօսը) երեան են գալիս գործելու հասարակութեան առաջադէմ ոյժերը [1]), որոնց մէջ նշանաւոր տեղ են բռնում կրօնի ներկայացուցիչները, որոնք մօտ առնչութիւն ունենալով ժողովրդի առտնին կենաց հետ, նորա միակ (?) մատչելի ոյժերն են ներկայացնում»։

Համարելով մեր ազգութեան գըլխաւոր «խարիսխը» հայ առաքելական եկեղեցին, «Արաքս»-ի հրապարակախօսը ասում է՝ «մեր համեստ կարծիքով ամեն մի հայ, ամեն մի գործիչ, ինչ կուսակցութեան էլ նա պատկանի, ինչ հայեացքների տէր

---

1) Իսկ քաղաքականապէս զարգացեալ ժողովուրդների մէջ երեան չե՞ն գալիս առաջադէմ ոյժերը։

էլ լինի, եթէ միայն նա ուզում է զարթեցնել հայ մարդի մէջ ինքնաճանաչութեան և գիտակցութեան գաղափարը, եթէ, ճշմարիտ, նա ուզում է ծաղկած ու մշակուած տեսնել հայ լեզուն ու գրականութիւնը, եթէ նա ցանկանում է նորան յատուկ յատկանիշները զարգացնելով ազնիւ հայ տեսնել նորա մէջ, անշուշտ (?!) ամեն մի այսպիսի գործիչը կամ ճըշմարիտ հայը պարտաւոր է միջոցներ որոնելու ապահովել հայ ժողովրդի մէջ նախ և առաջ նորա ազգային եկեղեցական կեանքը»։ Թէ ինչ է նշանակում այս վերջին նախադասութիւնը, մենք տեսնում ենք հետեւեալ խօսքերից՝ «թող թուլանայ ամեն մի կապ հայի կրօնական սըրբատեղերի հետ և չը յափշտակւի նա հայ եկեղեցու վեհ վարդապետութիւնով ու նորա նշանաւոր ազգային հայրապետներով, այն ժամանակ և ինքնին կը վերանան մեր ուսումնարանները, լեզուի, ազգային գրականութեան տարածումը հանդերձ մամուլով»... Եւ որպէս զի այդ թուլացումը չը լինի, «Արաքս»-ի հրապարակախօսը առաջարկում է «պարտ ու պատշաճ միջոցներ», բայց գլխաւորապէս՝ հայ հոգևորականութեան վերայ սաստիկ հսկողութիւն և դիսցիպլինա Էջմիածնի կողմից։

«Զանազան երկրներում ցիրուցան բնակութիւն հաստատած հայ ժողովրդի եկեղեցական գործերը պարտ ու պատճած վիճակի մէջ դնելու և նորան աւելի սերտ կապով կապելու համար Ս. Էջմիածնի հետ, ասում է յօդուածագիրը, անտարակոյս, նախ և առաջ կարևոր է դիմել հայ ժողովրդի ազգային—եկեղեցական կեանքի լուրջ ուսումնասիրութեան. Ռուսաստանում թեմական առաջնորդների միջոցաւ համաձայն եկեղեցու Պետից տրուած հրահանգին, իսկ Բուլղարիայ, Ռումինիայ, Աւստրո-Մաճառաստանի, Պարսկաստանի, Հնդկաստանի ու Բիրմանիոյ ազգային-եկեղեցական ուսումնասիրութիւնը յանձնել Ս. Էջմիածնից ուղարկուած մասնաւոր նուիրակի։ Տաճկա-Հայաստանի կրօնական ուսումնասիրութիւնը, միանգամայն յանձնում է պ. յօդուածագիրը Կ. Պօլսոյ Պատրիարքին»։ Յետոյ երբ այդ ուսումնասիրութեան նիւթերը կը հաւաքւին, կը կազմւի Էջմիածնում մի մասնախումբ «տեղեակ հոգևորականներից» որ կը մշակի միջոցներ, որոնք կը գործադրեն «համաձայն հայ առաքելական եկեղեցու և հայ ժողովրդի ազգային-կրօնական ամենակենսական շահերին»։

Յօդուածը վերջանում է այսպէս.

«Յուսանք, որ Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Մակարը կը բարեհաճէ ուշադրութիւն դարձնել, որդիական ակնածութեամբ արած մեր այս առաջարկութեան վերայ, որի գործադրութեամբ յաւիտեանս երախտագէտ կը կացուցանէ բովանդակ հայ ժողովուրդը դէպի հայ եկեղեցու ներկայ հովուապետը»։

Դժւար թէ մէկը կասկածի որ անհնարին է բացի բռնականից որ և է այլ կերպով կապել օտարերկրեայ և ցիրուցան եղած հայերին Էջմիածնի հետ։ Էջմիածինը, եթէ մինչև անգամ նիւթական միջոցներ և պատ-

րաստ մարդիկ ունենալ մի այդպիսի ուսումնասիրութիւն անելու, այնուամենայնիւ անզօր կը լինի «Բիրմանիյից մինչև Աւստրո-Մաճառաստան» տարածել հայ հոգևորականութեան վերայ «հսկողութիւն և դիսցիպլինա» և որ և իցէ կարգադրութիւններ անել կրօնական շրջանից դուրս օտար տէրութիւններում. ուղղակի պայմանները արգելք են դնում։ Հեռաւոր երկիրներում, ուր մի բուռն հայ շրջապատուած է բիւրաւոր օտար տարրով և ազգային ինքնուրոյնութիւնը մեռցնող հասարակական-քաղաքական պայմաններով՝ անուանական «հսկողութիւն և դիսցիպլինան» ոչինչ չեն կարող անել պահպանելու համար լեզուն և ազգութիւնը։

Եթէ ոյժ և միջոց ունենք դեռ մեր շուրջը գործենք, մեր քթի տակ տեսնենք։ Թող Էջմիածինը մտածի ռուսա-հայերի մասին, իսկ Պօլսի Պատրիարքարանը ըմբռնի իւր մեծ կոչումը ներկայումս և իւրաքանչիւրը այդ հաստատութիւններից գործի իւր շրջանակում եռանդով ու անձնուիրաբար և այն ժամանակ հեռաւոր տեղերում ցիրուցան հայերի սրտում էլ կը վառուի ոգևորութիւնը, կը զգացուի «ազգային կրօնական համերաշխութիւն»...

Տեսնենք միւս յօդուածները։

«Արաքս»-ը թոյլատրում է ամեն մի Թիւրքահայի գրուածք. այլապէս չի կարելի հասկանալ թէ ինչպէս այդ հանդէսի էջերում, որ այնքան «սուղ են» որ մինչ պ. խմբագիրը գանգատւում է թէ «ընդարձակ գրութիւններ չի կարողանում տպել»՝ այնուամենայնիւ տեղ են գտնում պ. Տօնապետեանի երկար ու ձիգ գրած, միամիտ անհետաքրքրական ու չափազանցացրած մանրամասնութիւններով առատ «կենսագրութիւնները» և պ. *** ի «Հայր» գրուածքի պէս անմիտ և անբարոյականացնող «գըրուագ»-ները։

Մենք պատրաստ ենք հաւատալու, որ «Ստեփաննոս եպիսկոպոս առաջնորդ Նիկոմիդիոյ» շատ գործունեայ և ազգասէր մարդ է, սակայն ինչ ընդհանուր հետաքրքրութեան արժանի բան է «տարեգրական կարգաւ» պատմել նորա ամեն մի աննշան գործը, խօսքը, շարժուածքը և այլն. 26 երեսում, դեռ ևս խոստանալով նոյնչափ յետոյ։ Այդ նկարագրութիւնը այնքան միամիտ է ու անհամ որ մինչև անգամ տեղ տեղ ծիծաղելի է դարձնում սրբազանին։ Ինչպէս երևում է Թիւրքա-հայերի մօտ շատ դիւրին բան է եղել ընկերութիւններ կազմելը. օրինակ, Ստեփաննոս սրբազանը, կենսագրողի ասելով, միայն Նիկոմիդիայում «հիմնեց բազմաթիւ օգտակար ընկերութիւններ, որպէս են Ասքանազեան, Աղքատախնամ, Հայկուհեան, Բարեգործական, Ուսումնասիրաց, Բարեսիրաց, Դպրաց դասի, Թանգարանի և այլ ընկերութիւններ... սակայն ամենէ աւելի յիշատակութեան արժանի է Բարեսիրաց ընկերութիւնը զոր կը կազմէ առաջնորդը ձկնորսներէ և այլ համաստիճան տգէտ մարդիկներէ, նպատակ (?) ունենալով պարսպել (!) և վայելչապէս զարդարել հայոց ծառազարդ գերեզմանատուն, ուր

1877-ին առաջնորդի կամեցողութեամբ մեծ հանդիսիւ թաղուեցան 6—7 երեւելի անդլիացի զինուորականներ»։ Եթէ լիշատակութեան արժանին սա է, երեւակայեցէք միւսները։

Զը բաւականանալով տղայոց և աղջկանց վարժարաններ չինելով իւր թեմում, սրբազանը բացել է Ադաբազարում նաև «կիրակնօրեայ լսարաններ կանանց համար»։ Եւ պ. Ցօնապետեանցը, որ առանձին «արտօնութիւն» է ունեցել անձամբ տեսնելու այդ «լսարանները», հիացմամբ պատմում է թէ ինչ են անում այդ «նշանաւոր հաստատութեան մէջ, որի չնորհիւ այժմ բոլորովին կերպարանափոխ եղած է Ատախազարի կանանց բարք ու վարքն»։ 760 կին և աղջիկներ են հաւաքւում։ Վարդապետը ընթեռնում է «կանանց ամուսնութեան նշանակութեան և պարտաւորութեան մասին»։ Յետոյ նա դուրս է գնում և սկսում են բոլորը «ատամնազուրկ պառաւները անգամ նւագել հոգեշունչ չարականներ, պատարագի ժամասացութիւն և կովկասեան շատ մը երգեր»։ Երգեցողութիւնը լաւախ ընդհատւում է փոքրիկ աղջիկներու բեմբասացութեամբ այլ և այլ նիւթերու մասին (?!)։ Մայրերն ու պառաւներն ուրախութեան անսահման ժպիտով կը դիտեն իրանց զաւակներն... յետոյ «կորաքամակ (?) պառաւներն» իսկ դասեր կառնեն։ Վերջստին կը թնդաւ սրահն կանացի բարձրաթռիչ երգեցողութեամբ» և այլն և այլն։

Սակայն ինչպէս ցոյց է տալիս զմայլմամբ պ. Ցօնապետեանը, սրբազանը չը բաւականանալով կրթականեկեղեցական գործելով, մտածում է նաև իւր հօտի գեղեցիկ սեռի առողջապահութեան մասին... և ձեռնարկում է բաղնիքի չինութեան (երես 49)։ Եւ մինչև անգամ ահա ինչպիսի հնարագիտութիւն է գործ դնում հարկաւոր գումարը լրացնելու։ Ծանուցանում է թէ այս ինչ օր այս եկեղեցում յատուկ միայն կանանց համար քարոզ է ասելու։ Երբ կանայք հաւաքւում են, փակել է տալիս ժամի դռները և համոզում է նրանց տալ իրանց բոլոր ոսկիներն, մատանիներն և զոհարեղէնները բաղնիքի համար, թէ ոչ՝ մկրատով կը կտրի իւրաքանչիւրի զարդերը։ «Երեկոյեան քաղաքը կիմանայ առաջնորդի խաղը և ամեն ոք խնդալէն կը ճաթի»։ Բայց այդ դեռ բոլորը չէ։

Ստեփան եպիսկոպոսը դէպի ազգութիւնները բաւական անխտիր մարդ է երեւում. օրինակ՝ այցելում է լաւախ թուրքերի ջամիները և քարոզ ասում. «մի անգամ ես այցելելով թուրքերի ճամին (մզկիթ), սարդի ոստայնով պատած կը գտնէ պատերն, անմիջապէս երկար աւել մը բերել կուտայ և ինքն անձամբ կը մաքրէ սարդոստայներն. և բուռն քարոզով կը կշտամբէ դնոսա թէ ուղղափառ մուսուլմանի չի վայելէր որ այս աստիճան խարխուլ անմաքուր վիճակի մէջ պահէ իւր սրբավայրն» (երես 55)։

Թէ ինչ աստիճանի անբնական և սանտիմենտալ բաներ են պատմում առհասարակ՝ ապացոյց հետեւեալը. 1886 թ. նոյեմբերի 22-ին Ասլանբէգ գիւղը ամբողջովին ապրում է։ Սրբազանը Պարտիզակ գիւղում հաց է ժո-

ղոլում, բեռնում ձիերու վրայ և քահանայի հետ գնում այրուած գիւղը։ «Տզալի պէս կուլար, ամբողջ օր ոտքի վրայ էր և մօտ 30 ժամէ ի վեր նըստած չէր և ոչ ալ պատառ մը բան բերանը դրած ունէր»։ Քահանան անօթութիւնից տանջւում է, վերջապէս յանդգնում է դիմել սրբազանին ասելով մի քիչ բան ուտենք։

—Ո՞ւր է հաց որ ուտենք, պատասխանեց առաջնորդը բուռն սըրտմըտութեամբ (?)։

—Հացէն աւելի ի՞նչ կայ, ասում է քահանան, ամեն կողմերէ լեցուն հաց բերած են»։

—Այն մեր հացը չէ, յարեց առաջնորդը, այլ այս թշուառ մարդոցն է, իրաւունք չունինք պատառ մ'իսկ ուտելու»։

Եւ չէ ուտում 35 ժամ սոված մնալով, թէև հաց շատ կար և, վերջապէս, փողով կարող էր գնել։

Նոյն անհետաքրքրական մանրամասնութիւններով շատախօսութեամբ և թեթևամիտ չափազանցութիւններով պատմում է պ. Տօնապետեանը «Ասպետն Աստուածատուր Ջունգի» մասին։

Լաւ կարծիք չի կարելի կազմել «Արաքս»-ի խմբագրի դրական գեղարւեստական ճաշակի վրայ նաև կարդալով այդ պատկերազարդ հանդիսի «սուղ էջերում» այնպիսի մի վավաշոտ գրուածք, ինչպիսին է ***-ի «Հայր գրուածք մը թատրօնական կեանքէ» գրութիւնը, ուր դուրս են բերուած երկու, իսկապէս անբարոյական մարդիկ, որոնց գործողութիւնների մէջ հեղինակը, կարծես, ինքն էլ անբարոյական բան չի գտնում և մինչև անգամ ոգևորուելով մտնում է հերոսի դրութեան մէջ և մի առանձին ախորժակով նկարագրում վավաշոտ տեսարաններ։ Կարդացէք ամբողջապէս այդ 15 երեսները և դուք չէք գտնի ոչինչ բացի մարմնական սիրուց։ Ահա այս գրուածի բովանդակութիւնը հեղինակի խօսքերով, դուրս ձգած միայն մի քանի աննշան նկարագրութիւնները և ոչինչ աւելին չը պարզող նախադասութիւնները։

«Տասնեութ տարեկան էր հիմա Արեգնազ (հերոսուհին), սովրած էր շատ մը բաներու սկզբունքները, սակայն ձեռքին արւեստ մը չ'ունէր. ոչ կար գիտէր, ոչ ձև. վարժուհի ըլլալ մտածել անգամ կը սոսկար։

«Հայրը մեռած էր վեց տարի առաջ, ոչինչ ժառանգութիւն չը թողլով բայց միայն պզտիկ տուն մը ի Բերա, որուն մէջ կը բնակէին Արեգնազն ու մայրը։ Աղքատութիւն կը սաստկացնէր իւր մատանջութիւնը։ Մտքով կը դեգերէր գաղափարի մը շուրջը՝ դերասանուհի ըլլալ»։

Եւ շնորհիւ իւր «կապոյտ աչքերու, նուրբ իրանի, երկայն մազերի և քաղցրահնչակ ձայնի» ընդունւում է դերասանական խումբում և «Գամէլիազարդ տիկին»-ի մէջ «Մարկրիթ Կօթիէ»-ի դերում հիացնում է մի երիտասարդ էֆէնդու՝ Վահանին։ Ներկայացումից յետոյ, «դերասանական խումբը փոքր ինչ քաջալերելու համար, կազմւում է մի մ ա ս ն ա խ ու մ բ մի այսպիսի նպատակով՝ «թատրօնը լեցնելու և մուտքի կրկին գիներ նշանակելու»։ Այդ մասնախումբը կազմելու ընտրւում է Վահանը, որը

այդ պաշտօնի շնորհիւ կարողանում է աւելի յաճախ տեսնել Արեգնազին։

«Երկուքին ալ սրտերը ծարաւոտ էին սիրոյ. երկուքին ալ զիրար սիրեցին... Երկուքն ալ զիրար սիրելու կոչում (?) ունէին։

«Ձմրան պարզ օրերէն մին էր։ Գաւառահանի հանդէպ կանգնած Վահան ու Արեգնազ կը դիտէին Ասիական Վոսփորի մթնաշաղ տեսարանը։ Վահան իւր ձեռքուն մէջ առաւ Արեգնազի մատները ու տաք համբոյրով պագաւ այդ բարակ մատները։ Մեղկութեամբ ետ քաշուել փորձեց Արեգնազը։ Վահան գրկեց անոր գլուխը. կռթնցուց զան իւր կուրծքին վրայ։ Ամբողջ մարմինը գրկին մէջ առաւ. պագաւ Արեգնազի ճակատն ու երեսներն և շրթունքներն հանգչեցուց անոր շրթունքներուն վրայ։ Կրակը երկուքին մարմիններու մէջ էր։

Մի օր Վահանը իմանում է հօրից որ «նոր դերասանուհի՝ Արեգնազի աչքերը աւրուեր են», որովհետև մի կնոջ խորհրդով ինչ որ դեղ է քսել աչքերին. մի քանի կոծիծները հեռացնելու համար։ Վահանը գնում է տեսնում որ ճիշդ է և ուղարկում է բժիշկներ բերեն. բայց արդէն չէր կարելի փրկել նորան. Արեգնազը կուրացել էր։ Վահան այդ օրից դառել էր տ ա ն բ ա ր ե կ ա մ։ «Ամենօրեայ այդ այցելութեան մէջ չը կար ո և է անպատեհութիւն» հանգստացնում է ընթերցողին հեղինակը։

Մի գարնանային օր, կէսօրից անց, մտնում է Վահան կոյրի մօտ և «երկու սիրահարները նստան պատուհանին առջև, ծունգ ծունգի, ձեռք ձեռքի»։

—Կառքով պտոյտ մը ընենք մինչև Շիլլի, ասում է Վահան և, առանց պատասխանին սպասելու, գնում գ ո ց կ ա ռ ք մը բերում ու իրարու քով նստած դիմում Շիլլիի ճամբէն։

Երբ հասնում են զբօսատեղին Արեգնազ ասում է.

—Բազմութեան մէջ չը նստենք, Վահան, առանձին տեղ չը կա՞յ։

Վահան ասում է թէ գիտէ «երթալիք տեղերնին» և թեն առնելով Արեգնազը ուղղւում է դէպի զւիցերական շալէ մը։ Այդտեղ բանալ տուեց նա իւր համար մի մասնաւոր սենեակ և բերել տուեց երկու գաւաթ գարեջուր, մի քանի ժամանակից յետոյ նա կրկնել տուեց գարեջուրը և սկսան խօսակցել։

«Իրիգնապահի զով հովն սկսած էր թեթև թեթև փչել. Վահան ծածկեց Արեգնազը իւր ճերմակ շալովը. ձեռքերը կը դողային զնա ծածկած րոպէին.

—Կերակուրնիս հոս ուտենք, Արեգնազ, ըսաւ յանկարծ երիտասարդը։

...Երբ կէս գիշերէն երկու ժամ առաջ նոքա մեկնեցան Շիլլիէն երկուքին ալ աչտերը կարմրած էին։ Արտասովոր ոգևորութիւն մը կը տիրէր իրենց սիրտը... Վահան, աչուկները կիսախուփ, խորասուզւած էր հեշտ թմրութեան մէջ։

«Երբ տուն հասան, Վահան իւր վրայ առաւ յանցանքին բոլոր պատասխանատուութիւնը։ Աղջկան մայրը կանուխ պառկելու սովորութիւն ունէր, և միշտ վստահաբար [1]) թողլ

---

1) Ի՞նչ հիման վերայ. Նպատակով երևի։ Անհասկանալի է միանգամայն մօբ

կուտար որ երկու երիտասարդները միայնակ մնան։

—«Օ՛ֆ, օֆ, գինին շատ փախաւ, գլուխս կը դառնայ կոր, ըսաւ Արեգնազ։ սա գիշեր կանուխ պիտի պառկիմ. ինծի անկողնիս քով տար և գիշեր բարի ըսէ։ Աս օրւան պէս զբօսնած չունէի շատոնցէ ի վեր. որչափ շնորհակալ եմ քեզի, Վահան։

—Ըրածս բան մը չէ, ըսաւ Վահան, և կոյրին ձեռքէն բռնելով լուչիկ քովի սենեակը տարաւ։

Անկողինը հոն ձգուած էր, գետնի վրայ. սաւանը կը պարզէր իւր ձիւնական ճերմակութիւնը. վերմակը մէկ քով ծալլուած էր։

—Շնորհակալ եմ, ալ պէտք չունիմ քեզի… գիշեր բարի։

—Չէ, այսչափ կանուխ մեկնիլ չեմ ուզեր։ Եւ քեզի բան մը գրուցեմ այս գիշեր խենդ փափագ մը ունիմ։

—Ինչ փափագ…

«Արեգնազի կոյր ըլլալը հաղորդեցին Վահանի հօրը և մօրը։ Վահան կոտրած էր, տխուր։

Հայրը։—Հիմա ինչ պիտի ընես, պէտք է դարման մը գտնել։

Որդին։—Այո, ես ալ դարմանել կուզեմ, և միակ դարմանը ամուսնութիւնն է։

Հայրը դէմ է ամուսնութեան գըլխաւորապէս նորա համար որ ծախքը մեծ կը լինի կոյր կնոջ հետ ապրելու։ Վահանը խորհելով, որ արդարև ինք չէ պատճառը որ Արեգնազ կուրացաւ… կարծում է որ Արեգնազ պէտք էր մինչև անգամ գոհ ըլլար, որ զաւակ մը պիտի ունենար. շնորհիւ այդ զաւակին իւր ապագան, մօրն ապագան ալ ապահովուած է. դեռ ինչ կուզէ։ Այս մտածութիւններ սփոփեցին զինքը [1]. կարծեց թէ ծանր բեռ մը սրտին վրայէն մէկտի նետուեցաւ։

Բայց երբ զաւակը ծնաւ, նա մտածելով որ իւր որդին կեանքի մէջ «բիճ» կոչուելու է և որ մեծանալով նա իւր հօր վերայ վատ համարում պէտք է ունենայ, որ կոյր աղջիկ մը ակած, մայր ըրած և լքած էր, վճռեց ամուսնանալ։ Հայրը վռնտեց նորան իւր տանից։

—Դու կ՚ուրանաս մեծցած, հասած զաւակդ, ըսաւ Վահան հօրը, բայց ես չեմ կրնար ուրանալ իմ երկու շաբաթուան զաւակս»։

Ինչպէս տեսնում էք ոչ տիպեր, ոչ հոգեբանական անալիզ, ոչ իսկական սէր կայ այս «դրւագ»-ում և ոչ գաղափար կամ մի հարց կայ հասարակական. և թէ հերոսը, թէ հերոսուհին, թէ նոյն իսկ հեղինակը չափշտակուած են միայն հեշտասիրութեամբ որ շատ միամիտ կերպով այդ միակ փափագը աշխատում են սքօղել իրարից։

Եւ դեռ այս քաղուածների միջից դուրս ենք թողել գրուածքի մի

անտարբերութիւնը դէպի աղջկայ վիճակը։ Նա թոյլ է տալիս երիտասարդին իւր աղջկան միայնակ տանել զբօսանքի, կէս գիշերին վերադառնալ, տանել ննջարանը, մնալ գիշերը, և այդ բոլորը ախմախաբար»։ Ծիծաղալին այն է, որ հեղինակը ինքն էլ հաւատում է որ այդքան անմեղ կարելի է միամիտ լինել։

[1] Զի բանաստեղծի սիրտ կը կրէր Վահան (երես 94)։

քանի մասերը, որոնց վեր արտադրելը այստեղ դրականապէս անկարելի եղաւ մեզ, այն աստիճան նոքա բուրում են Պօլ դը Կօք'եան սօուսով.

«Արաքս»-ում տպած մնացած գրքերից ուշադրութեան արժանի են «Մուշ»—տեղագրական նկարագրութիւն, «Ցաճկա-Հայաստանի արդի տնտեսական վիճակը», «Արձագանք մի Մշոյ աշխարհէն» և «Հայաստան» լրագրից արտատպած Ներսէս Պատրիարքի հռչակաւոր ճառը որ 1878 թ. յուլիսի 21-ին ազգային ժողովում էր արտասանած։ Մատենախօսական բաժնում պ. Նումէնի և պ. Գ. Խալաթեանի քննութիւնները։ Խորէն ծ. վ. Ստեփանէի թարգմանած Մովսէս Խորենացու Հայկական Պատմութեան մասին։ 40 երեսում արած մանրամասն քննադատութիւնից պ. Գ. Խալաթեանը գալիս է համարեա այն եզրակացութեան այդ թարգմանութեան մասին ինչ որ «Մուրճ» № 1 տպած գրախօսութիւնը [1]), որը համարել էր այդ թարգմանութիւնը՝ անաջող և ոչ միշտ հասկանալի, աշխարհաբար ու ժողովրդական (երես 104), չը արտայայտող Խորենացու կորովի, պերճ և ողորկ ոճը (երես 105) և չ'ունեցող գրական արժէք (եր. 106)։ Պ. Խալաթեանն էլ իւր քննադատութիւնը վերջացնում է հետևեալ խօսքերով. «Խորենացու Պատմութեան աշխարհաբար թարգմանութիւնը անլաջող է և անդոհացուցիչ. պէտք է նորից թարգմանել նրան»։

Թողնելով մի կողմ թոյլ ոտանաւորները և Լերմոնտովից արած ծանր թարգմանութիւնը, դառնանք նկարներին, որոնք, չի կարելի չը նկատել, որ շատ նուրբ և գեղեցիկ են դուրս բերած «Արաքս»-ում։ Միմիայն ցանկալի է որ հայկական կեանքից աւելի շատ թուով նկարներ լինէին։ Նոյն իսկ ռուսաց-Հայաստանի հայ ժողովրդի տնային կենցաղը, կանանց հագուստները, գիւղերի և խրճիթների տեսքը կարող են բաւական հետաքրքրական նիւթ մատակարարել։ Եւ այդ գժուար չէ, քանի որ Կովկասում կարելի է գտնել բաւական լուսանկարիչներ, որոնք ունեն հանած հայկական կեանքից զանազան տեսարաններ. օրինակ Բօինով, Երմակով և այլն։

Այսպէս ուրեմն տեսնում ենք, որ «Արաքս»-ի հրապարակախօսական մասը վերին աստիճանի թոյլ է. դրական-գեղարուեստական մասը անգոյն, ծանր կամ ուղղակի անկարելի են («Հայր»)։ Պատկերները թէև նուրբ և գեղեցիկ են, բայց մասամբ հեռու են մեր կեանքից և մասամբ աննշան ու ոչ մի «կրթիչ նշանակութիւն» չ'ունեցող (օր. անտառ, Բախչիսարայի տեսարան, անտառային հովերգութիւն). ցանկալի է «գեղարուեստական բաժնում» տեսնել գլխաւորապէս հայ նկարիչների նշանաւոր նկարների օրինակները, իսկ ընդհանուր եւրոպականից կամ ռուսականից միմիայն կլասիկական և հռչակած ստեղծագործութիւնների օրինակները։

Ն.

---

[1]) Տե՛ս «Մուրճ»ն 1990 թ. № 1, երես 102—106։